64-ՐԴ ՆԻՍՏ

31 հունվարի 1919թ.

Բացվում է երեկոյան ժ. 7-ին, նախագահությամբ *Դ. Ջուբյանի.* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, խնամատարության և զորական մինիստրները:

Նախագահ - Հայտնում է ներքին գործոց մինիստր Արամ Մանուկյանի մահվան մասին և առաջարկում հոտնկայս հարգել նրա հիշատակը:

Դահլիճը ոտքի է կացնում:

Ս. Վրացյան - Դաշնակցական ֆրակցիայի կողմից առաջարկում է նիստը փակել ի նշան հարգանքի:

Նախագահը քվեարկում է առաջարկությունը, որ ստանում է 11 ձայն, 14 հոգի մնում են ձեռնպահ, իսկ դեմ՝ ոչ մի ձայն:

Նախագահ - Առաջարկությունն ընդունված չէ, ուստի և խորհրդարանն անցնում է հերթական խնդիրներին:

Ս. Վրացյան - Մեր ֆրակցիան հնարավորություն չունի մասնակցելու այսօրվա նիստին:

Դաշնակցական ֆրակցիան թողնում է դահլիճը:

Նախագահ - Քվորում չլինելու պատճառով նիստը հայտարարում եմ փակված և խնդրում եմ կազմել պատշաճ արձանագրություն:

Նիստը փակվեց ժ. 7 և կեսին:

«Զանգ», 12 փետրվարի 1919թ.